Ալեքսանդր Հարությունյան

Կոմպոզիտոր, դաշնակահար, ԽՍՀՄ և ՀԽՍՀ ժողովրդական արտիստ,
պետական մրցանակների դափնեկիր, Երևանի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր



Ծնվել է 1920թ. Երևանում:

1927թ. սկսել է հաճախել Երևանի կոնսերվատորիային կից մանկական խմբակ:

1934թ. ընդունվել է Կոնսերվատորիա՝ դաշնամուրի (դաս.՝ Օ. Բաբասյան) և կոմպոզիցիայի (դաս.՝ Ս. Բարխուդարյան, Վ. Տալյան) բաժիններ:

Կոմպոզիցիայի դասարանում նրա գրած առաջին ստեղծագործությունը «Հայկական պարն» է (1935թ.):

1941թ. պետական հանձնաժողովի երաշխավորությամբ գործուղվել է Մոսկվայի կոնսերվատորիա կոմպոզիցիայի գծով ուսումը շարունակելու համար:

1946 - 48թթ. սովորել է տեղի Հայկական մշակույթի տան ստուդիայում՝ Հենրիխ Լիտինսկու խմբում: Ավարտելուց հետո վերադարձել է հայրենիք և դասախոսել Երևանի կոնսերվատորիայում:

1977թ. Կոնսերվատորիայի դասական բաժնի պրոֆեսոր էր:

1954-90թթ. Հայկական ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավարն էր: Փողային գործիքների համար նրա գրած գործերը տեղ ունեն միջազգային երաժշտության ոսկե գանձարանում:

1988թ. գրել է «Հայաստան-88» ջութակի կոնցերտը: Շեփորի համար 1950թ. գրած 6-րդ կոնցերտը նրա երաժշտական ամենախոշոր ստեղծագործությունն է:

Ալ. Հարությունյանը երաժշտություն է ստեղծել նաև ֆիլմերի համար. «Նահապետ», «Արևածագից մեկ ժամ առաջ», «Սիրտն է երգում», «Ուրվականներ են հառնում լեռներից» և այլն:

Նկարահանվել է «Լալվարի որսկանը» ժապավենում:

Արժանացել է Մովսես Խորենացու մեդալի, Սբ. Մեսրոպ Մաշտոցի շքանշանի, եկեղեցու «Սբ. Սահակ - Սբ. Մեսրոպ» շքանշանի, ՀՀ ԳԱԱ ոսկե մեդալի: